վոր բացատրությունը տալիս է այն անսանձ կամայականությունների պատկերը, որոնց ենթարկված էր գյուղացիությունը բեկական հողերի վրա։ Ասատ-բեկը գավառի ամենախոշոր ձիաբույծ կալվածատերն էր և գտել էր հեշտ միջոցներ իր բազմաթիվ երամակները պահելու համար։ Այդ բացատրության մեջ նշված են հասարակությանը հասցրած նեղությունները։

1. Մեր գյուղիցն ու մեր հասարակությունիցն հասանելի մալուջահաթիցն դուրս և ավելի ամեն մեկ տարի 25 չեթվերթ գարի է առնում մեր գյուղումը պահելիս յուր չորս հատ այղըրնէրին (որձ ձիերին) ուտացնում։

2. Ամեն մեկ տանից տարին 5 բեռն դարման է առնում յուր ձիանոցն համար, որ թվով են իբրև 20 հատ, նաև տարեցտարի, առնում է մեկ բեռ խոտ ոչ թե մեր գյուղի տափիցն, այլ քրդերի տափիցն, և այն էլ առնում ենք փողով, ոչ թե մուֆտա։

3. Հիշյալ ձիանոցն պահելու մասին Ասատ-բեկին թալուց (պատկանող) 5 մարդ են լինում ամեն տարի ինն ամիս, որոց ամենայն խարջն մենք ենք տալիս, այսինքն օրն մեկ բեռն փայտ, երկու գրվանքա ճրագալույս, երեք անգամ հաց և քնելու համար 5 դաստ շոր, ամեն օր մեկ մեկ տանից նօբաթով (հերթով)։

4. Մեր հասարակությունիցս մին մէհտար (ձիապան) է առնում առանց տօնլուղի (վարձի), ինն ամիս յուր ձիանքն պահել տալիս մեր հացովն։

5. Ինչքան ձիանքն կապելու մասին փոկ կամ, որ նույն է, շրվան է հարկավորվում, ամենն մեզանից է առնել տալիս։

6. Յուր իլխին (երամակ) սարումն եղած ժամանակն Ասատ-բեկը մեր հասարակությունիցն ամեն տարի 4 մարդ է տանում և չորս ամիս այնտեղ յուր իլխին պահել տալիս մեր հացովն և մեր ամեն բանովն։

7. Յուրյան մեր գյուղի հողին վերա եղեալ բաղին մասին մեզանից տարին 100 փաիլա (մշակ) է տանում, 6 օր բանացնում, 25 հատ լուծ եղն 75 մարդով տանում է էլի բաղումն վար անել տալիս, բօստան անելով և ուրիշ հարկավորության մասին։

8. Եվս և ամեն տարի հրամայում է Ասատ-բեկն և մեք էլ ամեն տուն մեկ բեռն ֆիլիսար (ձողեր) ծմակիցն կտրում ենք, մեր ուլախավը (բարձկան) տանում նրա բաղն մեր հացովն։

9. Մեր հասարակության միջիցն ով որ հարսանիք է անում, յուրաքանչյուր հարսանիքի տիրոջիցն 1 ռուբլի 20 կոպեկ արծաթյա փող է առնում Ասատ-բեկն և 2 ջուխտ գուլպա։

10. Մեք մեր գյուղի հողին վերա ամենքս մեզ համար, մեր թագավորական ռայաթ (հպատակ) եղած ժամանակն, մեծ ջափավ և պատուհասով բաղ եմք շինել, որ վայելենք նրա բերքերն, բայց քանի ժամանակ կա որ Ասատ-բեկն այն բաղէրի հասույթի մասին մեզանից այնքան դախօտ (եկամուտ) է պահանջում, որ միանգամայն այս տարի աչքից գցել եմք որ փչանա։

11. Ամեն մեկ տարի Ասատ-բեկը 30 հատ գութան մեզանից կտանե մեր հողի վրա ցէէլ (վարել) կտա, յուրյան պատկանյալ ցորենովն ցանել կտա, մեզ հնձել և թակել կտա ու մեր ուլախօվն տանել կտա Ղալաե (Շուշի) յուր տունն՝ ոչ թե մեր կամքովն, այլ նրա զորովն։

12. Ամեն տարի ութ անգամից ավելի ձու կը հավաքե և ճուտ, որ ամենեվին սովորություն չկա այս կողմերումս։